ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի, ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ Սենիկ Ներսիսյանի և ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյանի՝ 2024 թվականի ապրիլի 24-ից 27-ը Ուզբեկստանի Հանրապետություն (ք. Տաշքենդ) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ,

Սենիկ Ներսիսյան – ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ,

Օհաննա Գառգալոյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյան, ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման բաժնի պետ Սենիկ Ներսիսյան, ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյան Ուզբեկստանի Հանրապետություն, ք. Տաշքենդ, 2024թ. ապրիլի 24-ից 27-ը:

3. Հրավիրող կողմը՝

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի քարտուղարություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ Ղեկավարների խորհուրդ) 78-րդ նիստն անց է կացվել երկօրյա ձևաչափով: Ս.թ. ապրիլի 25-ին տեղի է ունեցել Ղեկավարների խորհրդի փորձագետների նիստը, որի ընթացքում վերջնական քննարկվել և համաձայնեցվել են օրակարգում ներառված և նախապես մշակված հարցերը, իսկ ապրիլի 26-ին անց է կացվել Ղեկավարների խորհրդի բարձր մակարդակի նիստը, որի ընթացքում մաքսային ծառայությունների ղեկավարների կողմից քննարկվել են վիճահարույց խնդիրները և ստորագրվել են նիստերի օրակարգերում ներառված որոշումները:

5. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է մաքսային կարգավորման ոլորտին առնչվող տարբեր հարցեր, այդ թվում նաև՝ ֆիզիկական անձանց կողմից համապատասխան ապրանքների ներմուծմանը, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների և երկաթուղային փոխադրողների փոխգործակցության տիպային տեխնոլոգիային, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների մաքսային նպատակներով փորձագիտական և հետազոտական կենտրոնի մասին համաձայնագրի նախագծին, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների տարանցիկ պորտալի ստեղծմանը, փոխադրումների հետագծելիության նպատակով նավիգացիոն կապարակնիքների կիրառմանն առնչվող մի շարք հարցեր: Նիստի ընթացքում Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության Դաշնային մաքսային ծառայության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռուսլան Վալենտինի Դավիդովը 1 տարի ժամկետով ընտրվել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նիստի մասնակիցները ճանաչողական այց են կատարել Ուզբեկստանի Հանրապետության մաքսային ծառայության էլեկտրոնային հայտարարագրման, ինչպես նաև ռիսկերի

մոնիթորինգի և թիրախային կենտրոն, կիբերանվտանգության, զանգերի կենտրոն և Կենտրոնական մաքսային լաբորատորիա:

Նիստի ընթացքում քննարկվել են նաև նաև ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 79-րդ նիստի անցկացման առնչությամբ հարցերը:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստերի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 10 որոշում, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ԱՊՀ անդամ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության և մաքսային ոլորտում աշխատանքների ակտիվացման, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 79-րդ նիստի՝ 2024 թվականի 2-րդ կիսամյակում, Ռուսաստանի Դաշնությունում անցկացնելու առնչությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ա. Մուրադյան

Ս. Ներսիսյան

Օ. Գառգալոյան

29.04.2024